Քլարք դպրոց հաճախելու բնակավայրի վերաբերյալ հաճախակի տրվող հարցեր (2019-2020)

1. **Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի սահմաններից դուրս բնակվող աշակերտները կարո՞ղ են Քլարք հաճախել:**
Ոչ: Քլարքը (CMHS) դիմումնագրեր ընդունում է միայն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի սահմաններում բնակվող աշակերտներից:

2. **Գլենդելի հանրային դպրոցներ չհաճախող Գլենդելի բնակիչները կարո՞ղ են դիմել:**
Այո, եթե ներկայում բնակվում են Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի տարածքում, բայց ներկայում հաճախում են մի այլ դպրոց, որը Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանին չի պատկանում, կարող են դիմել CMHS-ին:

3. **Ի՞նչ է հարկավոր մեզ, որպես ապացույց, որ Գլենդելի բնակիչ ենք:**
Դուք, պետք է ձեր ծնողի/խնամակալի անվամբ 2 <u>այժմեական</u> կենցաղային սպասարկման ծառայության փաստաթուղթ ներկայացնեք:

4. **Եթե միայն մեկ կենցաղային սպասարկման փաստաթուղթ ունեմ իմ ծնողի/խնամակալի անվամբ, դեռ կարո՞ղ եմ դիմել:**
Այո, բայց պետք է բացատրագիր ներկայացնեք, թե ինչու մյուս փաստաթղթերը ծնողի անունով չեն: Դուք պետք է ներկայացնեք ձեր վարձու տան պայմանագիրը (եթե վարձու է) կամ սեփականատիրոջ ձեր փաստաթուղթը (եթե տունը ձերն է):

5. **Մենք որևէ կենցաղային սպասարկման փաստաթուղթ չունենք, քանի որ դրանք վարձի մեջ են ներառված: Ինչպե՞ս կարող ենք մեր բնակությունը փաստել:**
Դուք պետք է ներկայացնեք ձեր վարձու տան պայմանագիրը, որը կփաստի ձեր ասածը: Ինչպես նաև, ներկայացնեք 2 այլ փաստաթղթեր, ինչպիսին են՝ տան, ավտոմեքենայի և առողջության ապահովագրություն, կամ հեռուստակապի (cable) կամ բջջային հեռախոսի սպասարկման ծառայությունների փաստաթղթեր:

6. **Այս ամառ(կամ պատահական <u>ընտրությունից հետո</u>), մենք Գլենդել ենք տեղափոխվում, կարո՞ղ է իմ երեխան պատահական ընտրության մասնացել:**
Ոչ, պետք է երկու այժմեական կենցաղային սպասարկման փաստաթղթեր ներկայացվեն GUSD-ին, մինչև դիմումնագրերի ժամկետի ավարտը: Այս աշակերտները պետք է վիճակահանությունից հետո դիմեն, սպասացանկին դրվելու կամ հաջորդ տարվա համար:

7. **Իմ զավակը շաբաթվա ընթացքում մնում է իր տատիկի մոտ, Գլենդելում, որովհետև մենք երկուսս էլ աշխատում ենք օրվա ընթացքում: Նա երբեմն գիշերում է այնտեղ: Կարո՞ղ ենք տատիկի հասցեն օգտագործել դիմելու համար:**
Ոչ, աշակերտը չի կարող երկու բնակավայր ունենալ: Որտեղ որ նա բնակվում է իր ծնողների հետ, դա է
նրա բնակավայրի հասցեն: Այլ հասցե ներկայացնելը կհամարվի կեղծարարություն և կզրկի նրան դիմելու իրավունքից:

8. **Մենք տուն գնելու գործընթացի մեջ ենք, (30 կամ 60 օրվա գործընթացքում) կարո՞ղ է իմ երեխան դիմել** CMHS:
Այո, դուք պետք է escrow-ից փաստաթուղթ ներկայացնեք այլ փաստաթղթերի հետ մեկտեղ և երկու այժմեական կենցաղային սպասարկման փաստաթղթեր ներկայացնեք, երբ escrow-ն ավարտվի: Եթե դուք չկարողանաք կենցաղային սպասարկման փաստաթղթեր ներկայացնել, ապա դիմումը չեղյալ կհամարվի և ձեր երեխան չի կարողանա CMHS հաճախել:

9. **Մենք մի քանի սեփական տներ ունենք Գլենդելում, բայց մենք այնտեղ չենք բնակվում, կարո՞ղ ենք այդ հասցեներից որևէ մեկը գործածել, քանի որ դրանք մեր սեփականությունն են և մենք վճարում ենք դրանցից մի քանիսի կենցաղային ծառայությունների համար:**
Ոչ, բացի ձեր բնակավայրի հասցեից՝ ուր բնակվում է աշակերտը, մի այլ հասցե տալը կհամարվի կեղծարարություն և կզրկի ձեզ դիմումանգրի իրավունքից:

10. **Իմ զավակը բնակվում է իմ քրոջ/եղբոր/ազգականների/ծնողների հետ Գլենդելում: Կենցաղային ծառայությունների փաստաթղթերը իրենց անունով են, կարո՞ղ եմ այդ փաստաթղթերը ներկայացնել:**
Դիմումնագիր կընդունվի միայն այն պարագայում, երբ այդ ազգականը աշակերտի օրինական խնամակալն է: GUSD-ն դատարանից օրինական փաստաթուրթ կպահանջի, փաստելու նրա «խնամատարի» ստանձնած պաշտոնը: Ինչպես նաև, կպահանջվի խնամակալի անվամբ երկու կենցաղային սպասարկման փաստաթղթեր ներկայացնել: